ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅՑՈՐԴ ԴԱՎԻԹ ԱԼԵՔՍԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ «ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02-«ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ազատական տնտեսության շարժիչ ուժը տնտեսական մրցակցությունն է: Շուկայական հարաբերությունների համակարգում գնորդներն և վաճառողներն ազատ կերպով կատարում են բարիքների փոխանակություն: Յուրաքանչյուր ազատ շուկա հիմնված է երեք հիմնական տարրերի՝ գնի, պահանջարկի ու առաջարկի և մրցակցության վրա: Վերջինս այն շարժիչ ուժն է, որի միջոցով գործարկվում են շուկայական հարաբերությունները: Այսինքն, այն առանցքը, որի շուրջը ձևավորվում է՝ առավելագույն եկամտի ստացման համակարգը: Մրցակցություն ծագում է այն ժամանակ, երբ միևնույն շուկայում իրացվում է միևնույն տեսակի կամ իրենց սպառողական հատկություններով իրար նման շատ արտադրանք: Այդ միասեռ ապրանք արտադրողներից յուրաքանչյուրը կարող է շուկա դուրս բերել այնպիսի քանակությամբ ապրանքներ, որոնք զգալի ազդեցություն կարող են ունենալ շուկայական գնի ձևավորման վրա: Այդ պատճառով, շուկայում պետք է բացառվի մենաշնորհների տիրապետությունը, քանի որ նրանք, օգտվելով ապրանքների արտադրության իրենց առավելություններից, կարող են թելադրել մենաշնորհային գներ, դրանով իսկ խոչընդոտել ազատ մրցակցությանը և հավասարակշռված գների սահմանմանը:

Այն առանձնահատուկ խթանները, գործիքակազմն ու տրամաբանություն, որոնք ազդում են մրցակցության վրա, ձևավորում են մրցակցային գործարար միջավայրը: Ընդհանուր գծերով հանդերձ, տնտեսության տարբեր ոլորտներում տնտեսական

միջավայրն ունի առանձնահատկություններ, որոնք բնորոշ են հատկապես ագրարային ոլորտին: Այդ առանձնահատկությունները թելադրված են ոլորտի բնական, կառուցվածքային և կազմակերպա-իրավական յուրահատուկ հատկանիշներով: Նախ, գյուղատնտեսության արտադրության գործընթացը սերտորեն պայմանավորված է բնական գործոններով, իսկ հիմնական արտադրական գործոնը հողն է: Արդեն իսկ նշված հատկանիշը ենթադրում է արտադրության ծավալների և արտադրանքի քանակի որոշակի սահմանափակում ժամանակի և տարածության մեջ: Ահավասիկ, դրա վկայությունն է, որ գյուղատնտեսությանը բնորոշ է սեզոնայնությունը և որոշակի աշխարհագրական միավորի շրջանակում արտադրվող տեսականու սահմանափակվածությունը: Երկրորդ, պարենային ապրանքների առաջարկի և պահանջարկի առանձգականությունը մեծ չէ, ուստի գնային տատանումների միջակայքը ևս սահմանափակ է: Երրորդ, գյուղատնտեսական արտադրանք արտադրողների թիվը բավականին մեծ է և հատկապես տեղական արտադրանքների տեսականու շուկայի կենտրոնացման սպառնալիքը փոքր է:

Այդուհանդերձ, ագրարային ոլորտի ապրանքային շուկաների ուսումնասիրությունն ու դրանում մրցակցային վիճակի գնահատումը առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ դրանց սպառումը պայմանավորում է ոչ միայն բնակչության պարենային ապահովումը, այլև հարակից ճյուղերի և արտաքին առևտրի բնականոն գործունեությունը: Արդեն իսկ երկրի պարենային անվտանգությունը պահանջում է պարենի ֆիզիկական և տնտեսական մատչելիություն, ինչպես նաև՝ պարենային շուկայի երկարաժամկետ կայունություն, որոնք ազգային անվտանգության կարևոր բաղադրիչներ են: Մակրոտնտեսական առումով ևս ագրոպարենային ոլորտի դերակատարությունը բավականին մեծ է, քանի որ այն գյուղատնտեսական հումքի և արտահանվող ապրանքների զգալի մասի հիմնական մատակարարն է: Այնպես որ, ինչպես նշում է ատենախոսը. «Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է ագրոպարենային ոլորտում առկա ապրանքային շուկաների մրցակցային միջավայրի գնահատման, ազատ մրցակցային մոտեցումների մշակման, հակամենաշնորհային քաղաքականության ձևավորման ու արմատավորման և այդ համատեքստում՝ ագրոպարենային ոլորտում ընդհանուր տնտեսական

քաղաքականության հետ մրցակցության զարգացման ուղիների բացահայտման անհրաժեշտությամբ»:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ - ում ագրոպարենային ոլորտի մրցակցային միջավայրի գնահատումն է և հետագա բարելավմանն ու հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության բարձրացմանն ուղղված հայեցակարգային մոտեցումների և առաջարկությունների մշակումը: Այդ նպատակի իրականացման համար աշխատանքում դիտարկվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ՀՀ ագրոպարենային ոլորտում տնտեսական մրցակցության հիմքերը և մրցակցային միջավայրի ձևավորման պայմանները,
- վերլուծել մրցակցության կարգավորման հիմքերը և զարգացման փուլերը.
- գնահատել մրցակցային հարաբերությունների ձևավորման և զարգացման առանձնահատկությունները, բացահայտել դրանց առնչվող խնդիրները,
- իրականացնել տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծություն Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգի մի շարք ապրանքային շուկաներում, բացահայտել առկա մրցակցային խնդիրներն ու ներկայացնել դրանց կարգավորման առաջարկներ,
- վերլուծել Հայաստանի Հանրապետության մրցակցային օրենսդրության ընդհանուր կառուցվածքը՝ քննության առնելով բարեփոխումների առկա միտումները ագրոպարենային համակարգում,
- ուսումնասիրել ագրոպարենային համակրգում մրցակցության պետական կարգավորման միջազգային փորձը,
- վերլուծել ագրոպարենային համակարգում տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության գործոնները և ներկայացնել դրանց բարելավման ուղիները,

- մշակել ՀՀ ագրոպարենային համակարգում մրցակցային միջավայրի բարելավման և տնտեսական մրցակցության պաշտպանության կառուցակարգերի արդյունավետության բարձրացման հայեցակարգային դրույթներ:

Ատենախոսության շրջանակում այս խնդիրների հետազոտման համար օբյեկտ է ընտրվել ՀՀ ագրոպարենային համակարգը, իսկ որպես հետազոտության առարկա՝ ագրոպարենային ոլորտում մրցակցային միջավայրի բարելավումը, մասնավորապես՝ մրցակցության պաշտպանության արդյունավետության բարձրացման կառուցակարգերի կատարելագործումը:

Ատենախոսությունում իրականացված հետազոտությունների համար տեսական հիմք են հանդիսացել տնտեսագիտության տարբեր դպրոցների, ուղղությունների, մասնավորապես, մրցակցության տեսության դասական աշխատությունները, շուկայական և անցումային շրջանի տնտեսությունների հիմնախնդիրների ու դրանց կարգավորման վերաբերյալ հայրենական ու արտասահմանյան հայտնի հեղինակների ուսումնասիրությունները: Իսկ որպես տեղեկատվական աղբյուր՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) տարեկան գործունեության ծրագրերն ու հաշվետվությունները, ապրանքային շուկաների վերլուծությունների արդյունքները, պետական մարմինների պաշտոնական հրապարակումները, ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալները և ագրոպարենային համակարգի որոշ ապրանքային շուկաներում տնտեսավարող սուբյեկտների գործունեության վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը:

ՀՀ ագրոպարենային ոլորտում ազատ մրցակցության միջավայրի բարելավման, օրենսդրական բարեփոխումների և զարգացման ռազմավարության մշակման նպատակով ատենախոսության մեջ ներկայացված առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության ռազմավարության, իրավական ակտերի մշակման և ՀՀ պետական լիազոր մարմինների օպերատիվ կառավարման համակարգում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից: Այն շարադրված է 143

էջի վրա, ներառում է 15 գծանկար, 30 աղյուսակ և օգտագործված գրականության 80 աղբյուր:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հրապարակած 12 գիտական հոդվածներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունն ու ձևակերպված խնդիրների կարևորությունը, ներկայացված են հետազոտության նպատակը, տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, արդյունքների գիտական նորույթն ու գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին՝ **«Մրցակցային միջավայրի կարգավորման տեսական հիմքերը և մեթոդաբանությունը»** գլխի **«Մրցակցային միջավայրի կարգավորման անհրաժեշտությունը շուկայական տնտեսության պայմաններում»** ենթավերնագրում հեղինակը ներկայացրել է մրցակցության և մրցակցային միջավայրի վերաբերյալ օտար և հայրենական հեղինակների հիմնարար աշխատությունները: Բացահայտել է կարևոր հասկացությունների և դրանց բովանդակային մեկնաբանության վերաբերյալ տարբեր կարծիքներն ու մոտեցումները, կատարել սեփական եզրահանգումներ և ձևակերպումներ:

Ատենախոսը կարևորելով տնտեսագիտության դասականների, հատկապես՝ Ա. Սմիթի և Դ. Ռիկարդոյի տեսությունները, առանձնահատուկ ընդգծում է «նոր դասական» դպրոցի ներկայացուցիչ Ա. Մարշալի արտադրական մենաշնորհների դերի վերաբերյալ արված գնահատականների երկակի բնույթը: Ա. Մարշալը մի կողմից նշում էր հասարակության համար մենաշնորհի բացասական հետևանքները, մյուս կողմից դրական գնահատում մենաշնորհի դերը հասարակության համար արտադրության զարգացման և սպառողների պահանջմունքների բավարարման տեսանկյունից: Այնուհետև հետևողական կերպով դիտարկելով մրցակցության տեսության զարգացման նոր ուղղությունները, ատենախոսը իրավացիորեն կարևորում է օրդոլիբերալիզմի հիմնադիրները՝ Ֆրայբուրգյան դպրոցի ներկայացուցիչներ Վալտեր

Օյկենի և Ֆրանց Բյոմի տնտեսության պետական կարգավորման մոտեցումները, առանձնացնելով տնտեսությանը պետության միջամտության երկու գաղափար՝ «կարգուկանոնի քաղաքականություն» և «տնտեսական կարգավորման քաղաքականություն»: Հեղինակի կարծիքով, երկրորդ աշխարհամարտից հետո այս գաղափարները Գերմանիայում լայն տարածում գտան, որը հնարավորություն տվեց սեղմ ժամկետներում վերականգնել քայքայված տնտեսությունը և հասնել տնտեսական բարեկեցության: Ատենախոսը կարծում է, որ այս գաղափարները կիրառելի են նաև Հայաստանում, երբ երկրում առաջնային է տնտեսության զարգացման խնդիրը:

Առաջին գլխի երկրորդ՝ « Տնտեսական մրցակցության կարգավորման տեսական հիմքերը» բաժնում ատենախոսը գերազանցապես անդրադառնում է ազատ մրցակցության գաղափարին: Մասնավորապես շեշտադրելով, որ «Ազատ մրցակցությունը որպես տնտեսական համակարգի արդյունավետ կենսագործման առաջնային պայման, իր խթանիչ ազդակներով նպաստում է գիտատեխնիկական գործընթացին, նոր արտադրաեղանակների ներդրմանը, ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ու արտադրական ծախքերի կրճատմանը, արտադրանքի որակի շարունակական բարելավմանը, գնագոյացման արդարացի մեխանիզմների հաստատմանն ու տնտեսական ներուժի հզորացմանը, հետևաբար, յուրաքանչյուր երկրի տնտեսական քաղաքականության առանցքային ուղղությունը պետք է լինի առողջ մրցակցային միջավայրի ձևավորման ու արմատավորմանը միտված ակտիվ հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը»:

Այնուհետև, ատենախոսը բավականին մանրամասն ներկայացնում է մրցակցային միջավայրի կարգավորման միջազգային փորձը ագրոպարենային ոլորտում և առանձնացնում ՀՀ-ի պայմաններում կիրառելի դրույթները:

Ատենախոսության երկրորդ՝ **«Մրցակցային միջավայրի կարգավորման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտում»** գլխում, ուսումնասիրվել են ագրոպարենային ոլորտի մի շարք ապրանքային շուկաների մրցակցային իրավիճակն ու դրանցում ազատ մրցակցությանը խոչընդոտող հարցերը, ինչպես նաև մրցակցության կարգավորող պետական լիազոր մարմնի՝ ՀՀ ՏՄՊՊՀ իրավասությունների շրջանակն ու ագրոպարենային ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մրցակցությունը սահմանափակող՝

գերիշխող դիրքի, հակամրցակցային համաձայնությունների, անբարեխիղճ մրցակցության, պետական օժանդակության տրամադրման երևույթների հատկորոշման ու գնահատման, ինչպես նաև սահմանվող պատասխանատվության միջոցների արդյունավետության, թույլ տրված իրավախախտումներին դրանց համարժեքության և հետագայում դրանց կանխման հարցերը: Մասնավորապես, «Կարագ» ապրանքային շուկայի 2018 և 2019 թվականների հունվար-հոկտեմբեր ամիսների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ՀՀ-ում կարագի պահանջարկը հիմնականում բավարարվել է ներկրման ծավալների հաշվին և առավել մեծ տեսակարար կշիռ է կազմում Նոր Զելանդիայից և Ուկրաինայից ներկրման ծավալները:

Հետաքրքիր է կարագի գնի փոփոխության նկատմամբ սպառողների զգայունությունը որոշելու նպատակով իրականացված պահանջարկի գնային առաձգականության գործակցի հաշվարկը: Վերջինս ցույց է տալիս, որ 2019 թվականի դիտարկվող ժամանակահատվածում 1 կիլոգրամ կարագի մեծածախ գնի 1 տոկոսով ավելացումն հանգեցրել է նրա նկատմամբ պահանջարկի 8.3 տոկոս կրճատման:

Նաև հաշվարկվել է «Կարագ» ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը բնութագրող՝ շուկայական կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի և Լինդայի ինդեքսները:

Բավականին մանրամասն հետազոտվել է նաև պանրի, կոնյակի, մսի, ձվի և ձկան ապրանքային շուկաների մրցակցային միջավայրը:

Ատենախոսության երրորդ՝ **«Տնտեսական մրցակցության պաշտպանության կարգավորման կառուցակարգերի բարելավման հիմնական ուղիները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտում»** գլխում, կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ատենախոսը հետևություն է անում, որ «Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգում մրցակցային իրավիճակի վերլուծությունը և մրցակցային օրենսդրության կիրարկման վերջին տասնամյակի փորձը ցույց է տալիս, որ օրենքով ամրագրված մրցակցության խաթարման գործողությունների սահմանափակումների՝ գերիշխող դիրքի չարաշահման, համակենտրոնացումների հայտարարագրման, հակամրցակցային համաձայնությունների և անբարեխիղճ մրցակցության կանխման, արգելված պետական օժանդակության տրամադրման և բացասական այլ դրսևորումների

կարգավորմանն ուղղված մեխանիզմները դեռևս կրում են բացթողումներ և չեն նպաստում առողջ մրցակցային միջավայրի ձևավորմանը»: Ուստի աշխատանքի վերջին գլխում մշակվել են ագրոպարենային ոլորտում մրցակցային միջավայրի բարելավման և տնտեսական մրցակցության պաշտպանության արդյունավետության բարձրացմանն ուղղված համալիր մոտեցումներ:

Ատենախոսության վերջնամասում ատենախոսը ներկայացնում է մի շարք եզրակացություններ և կատարում առաջարկություններ:

Ի մասնավորի նշում է, որ << ... ելնելով հնարավոր անբարեխիղճ մրցակցության երևույթների կանխարգելման և բացահայտման կարևորությունից, առաջարկում ենք Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 68 որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության թիվ ՄՄ ՏԿ 034/2013 տեխնիկական կանոնակարգում.

ա) սահմանել՝ մսամթերքի, այդ թվում՝ երշիկի և նրբերշիկի բաղադրության մակնշման մեջ մսի տեսակներից բացի օգտագործված մսի քանակի՝ տոկոսային արտահայտությամբ, մակնշման պարտադիր պահանջ,

բ) սահմանվող նորմերը տարածել նաև թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող մթերքների, ինչպես նաև այնպիսի սննդամթերքի վրա, որի բաղադրագրի մեջ թռչնի միսը և դրա վերամշակումից ստացվող մթերքներն ըստ զանգվածի ընդհանուր առմամբ գերազանցում են այլ մթերատու կենդանիների սպանդից ստացված մթերքի զանգվածը>>:

Հաջորդ կարևոր առաջարկությունը վերաբերում է. ԵԱՏՄ տարածքում գյուղատնտեսական մթերքների վերամշակման ոլորտում հավասար մրցակցային պայմաններ ապահովելուն և այդ նպատակով՝ «ՀՀ – ում գյուղատնտեսական մթերքների վերամշակման համար կիրառվող ԱԱՀ դրույքաչափը հավասարեցնել ԵԱՏՄ անդամ երկրների կողմից կիրառվող ԱԱՀ դրույքաչափին, այն է՝ կիրառվող 20 տոկոսի փոխարեն սահմանել 10 տոկոս»:

Ատենախոսը կարևորդում է այն իրողությունը, որ «Հանձնաժողովը չունի գների հիմնավորման փաստաթղթային ստուգման բավարար իրավասություն՝ որպես ապրանքային շուկաներում գնագոյացմանը հետևելու լծակ, և հիմնվում է միայն տնտեսվարող սուբյեկտների կողմից տրամադրված տեղեկատվության

վրա: Այս հանգամանքը զրկում է Հանձնաժողովին վարչական և դատական վարույթներում ապացուցողական մեխանիզմներ կիրառելու հնարավորությունից: Խնդրի լուծումը պահանջում է պետական կարգավորող մարմնին օժտել ստուգման ավելի լայն իրավասությամբ՝ բարձրացնելով տնտեսական շրջանառությունում փաստաթղթաշրջանառության կարգավորման մակարդակը»:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հայցորդի այն եզրակացությունը, որ «...հակամրցակցային համաձայնությունները բավականաչափ դժվար ապացուցվող իրավախախտումներ են, տվյալ խնդրի լուծման համար առաջարկում ենք կիրառել միջազգային պրակտիկայում գործող «վաղորդյան այցերի» մեխանիզմը, երբ հնարավոր հակամրցակցային համաձայնությունների բացահայտման և ապացուցման համար առանց նախազգուշա[illegible]ան ստուգումներ են իրականացվում ենթադրյալ մասնակից ընկերությունների մոտ՝ առգրավելով ցանկացած տեղեկատվական բազա, որը կարող է հիմք և ապացույց հանդիսանալ համաձայնությունների բացահայտման համար»:

Հետաքրքիր են և դիտարկման արժանի նաև ատենախոսի մյուս եզրակացությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսը ներկայացնում է, որ աշխատանքի գիտական նորույթը դրսևորվում է հետևյալ հիմանական արդյունքներով.

- ագրոպարենային համակարգում մրցակցային միջավայրի և տնտեսական մրցակցության պաշտպանության գործընթացի համակողմանի ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնախնդիրները ՀՀ ագրոպարենային համակարգի ապրանքային շուկաներում, մշակվել են դրանց հաղթահարման ուղիները,
- մշակվել են ագրոպարենային համակարգում տնտեսական մրցակցության պաշտպանության պետական լիազոր մարմնի լիազորությունների ընդլայնման և գործնական կիրառման կատարելագործման կառուցակարգեր,

- ՀՀ ագրոպարենային համակարգում սպառողների շահերի պաշտպանության նպատակով բացահայտվել են առկա հիմնախնդիրները, մշակվել են դրանց լուծման ուղիները,
- մշակվել են ՀՀ ագրոպարենային համակարգում տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության կատարելագործման ռազմավարական դրույթներ:

Ընդհանուր առմամբ ատենախոսին հաջողվել է ատենախոսության նպատակին և խնդիրներին համապատասխանող հետազոտություն ներկայացնել: Միաժամանակ աշխատանքում նկատվել են որոշակի թերություններ, որոնք հիմնականում հետևյալն են:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Աշխատանքի կառուցվածքում նկատելի է ակնառու անհամամասնություններ: Այսպես 1-ին գլխի շարադրանքը 25 էջ է, երկրորդ գլխինը՝ 70 էջ և 3-րդ գլխինը ընդամենը 17 էջ:

2. Աշխատանքի 42-րդ էջի «Կարագ» ապրանքային շուկայի ուսումնասիրություն վերնագրին տրված է հետևյալ հղումը. <<Հետազոտության արդյունքները, բացահայտված խնդիրները, արված եզրակացություններն ու դրանց հիման վրա ներկայացված առաջարկները ներառված են ՄՊՀ հրապարակման մեջ՝ http://competition.am/uploads/resources/Butter_commodity_market.pdf>>: Ցանկալի է, որ հեղինակային իրավունքը հստակացնելու նպատակով նշվեր հեղինակի մասնակցությունը այդ ուսումնասիրությանը:

3. Աղյուսակ 2.2.7.-ում պանրի արտադրության ընդամենը քանակը չի համապատասխանում ՀՀ ՎԿ-ի համապատասխան տարիների ցուցանիշներին:

4. Ցանկալի էր, որ հեղինակը առավել կոնկրետ ներկայացներ երրորդ երկրներից տավարի, խոզի և հավի մսի ներմուծման 2021 թ-ից ուժի մեջ մտնող բարձր մաքսային դրույքաչափերի ազդեցությունը մրցակցային միջավայրի վրա:

4. Գրականության ցանկում մասնագիտական գրականության վերջին հրատարակությունը 2017 թվականն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դիտարկվող ատենախոսությունն ավարտուն գիտական աշխատանք է և վերոհիշյալ

դիտողությունները չեն նսեմացնում արժանիքները: Ատենախոսության սեղմագիրը և հրապարակված հոդվածները բխում են աշխատանքի բովանդակությունից:

Դավիթ Ալեքսանի Հովհաննիսյանի «Մրցակցային միջավայրը եվ դրա կարգավորման ուղիները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտում» թեմայով ատենախոսությունն իր գիտական մակարդակով, հիմնավորվածությամբ, արդիականությամբ համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈՀ-ի պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02.-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝ տ. գ. դ., պրոֆեսոր Ս.Ս. Ավետիսյան

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Սամվել Սերյոժայի Ավետիսյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտ. քարտուղար Նաիրա Դարբինյան

17 դեկտեմբերի 2021թ.